ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ. «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԸ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ»

1995 թ. 22 ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ավանդական երաժշտության խորհրդին կից կազմակերպվեց Ավանդական երաժշտության ազգային խորհուրդ պատկերագրությանն ուսումնասիրող բաժանմունքով։ Խորհրդի կազմի մեջ մտան հնագետներ, ազգագրագետներ, երաժշտագետներ, ու պարարվեստագետներ՝ Հայաստանի տարբեր գիտական կազմակերպություններից։ Այս տարի մարտի 7—8-ին խորհուրդն անցկացրեց իր անդրանիկ գիտաժողովը՝ «Երաժշտությունն ու պարը պատկերագրության մեջ» թեմայով։ Գիտաժողովին իրենց մասնակցությունը բերեցին 17 գիտնական, Հայաստանի տարբեր գիտական օջախներից (հնագիտության և ազգագրության ինստիտուտ, արվեստի ինստիտուտ, պետական համալսարան, Երևանի պատմության թանգարան և այլն)։ Թե՛ ազգային խորհրդի և թե գիտաժողովի կազմակերպիչներն էին պատմական գիտությունների դոկտոր Էմմա Պետրոսյանը և պատմական գիտությունների թեկնածու Ժենյա Խաչատրյանը, հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Արամ Քալանթարյանի հովանավորությամբ։

Զեկուցումները դասավորված էին ժամանակագրական սկզբունքով։ Հնագույն շրջանին էր վերաբերում Ա. Փիլիպոսյանի և Հ. Քամալյանի «Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. III—I հազարամյակների նվագարաններն ու նրանց հին արևելյան զուգահեռները» հաղորդումը, որը հնագիտական գտածոներից առանձնացված և հնում լայն կիրառություն գտած երաժշտական գործիքների ձևի, կառուցվածքի և նշանակության մասին էր։ Զեկուցողները նյութի հաստատմամբ եկան այն եզրակացության, որ մ. թ. ա. III—I հազարամյակների վերջերից արդեն հայկական լեռնաշխարհի բնակիչները ծանոթ են եղել երաժշտական շատ նվագարանների (քնար, տավիղ-շնար, վին, ծնծղաներ, ֆլեյտա, բոժոժներ) և դատելով հին արևելյան քարձրաքանդակներից, կնքաշրջոշմներից ու որմնանկարներից, դրանք գործածվել են տոնախմբությունների և թաղման արարողությունների ժամանակ։

Ա. Պետրոսյանի «Քարաշամբի գավաթի երաժիշտը և նրա քնարը» զեկուցման մեջ դիտարկվեցին արծաթյա գավաթի գոտու վրա քանդակված նկարները։ Զեկուցողը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում առաջարկեց գոտիների կոմպոզիցիայի ուղղահայաց ընթերցում, որն օգնում է ծիսական արարողությունները մեկնաբանել ինքնատիպ ձևով։ Ֆ. Տեր-Մարտիրոսովը «Պանի հնագույն քարե սրինգը Հայաստանում» հաղորդմամբ ներկայացրեց Դաստակերտից պեղված քառափող քարե սրինգը, որը հայ երաժշտական գործիքների պատմության մեջ (V—IV դդ.) եղակի նմուշներից է։ Ենթադրվում է, որ այն ունեցել է իր կավե նախատիպը։ Զեկուցողը եզրակացնում էր, որ քառափող սրինգի առաջին երկու փողերն ունեն «մի» և «ֆա» մաքուր ձայները։

Անտիկ շրջանի երաժշտական գործիքների և պարերի մասին զեկուցումով հանդես եկավ Ժ. Խաչատրյանը՝ ներկայացնելով Գառնիի և Արտաշատի հնագիտական պեղումներից հայտնաբերված նյութերը։ Երաժիշտների, հատկապես քնարահարների, բազմաթիվ տերակոտե արձանիկները հաստատում են, որ Հայաստանում այդ շրջանում տարածված էին քնարը, սազը, սրինգը, ֆլեյտան, տարբեր տեսակի փողերը, շեփորները, թմբուկը և այլ գործիքներ, որոնք գործածվել են խնջույքների, հուղարկավորության, թատերական ներկայացումների, պատերազմական ու ծիսական գործողությունների ժամանակ։

«Դվինից հայտնաբերված՝ երաժշտի պատկերով մի անոթի մասին» (IX—X դդ.) հաղորդմամբ հանդես եկավ Ա. Ժամկոչյանը՝ հաստատելով, որ Հայաստանում երաժշտական գործիքների շարքում իր ուրույն տեղն է ունեցել քյամանչան։

Ն. Հակոբյանը «Արծաթե թաս երաժշտական գործիքի (տավիղ) պատկերով (XII—XIII դդ.)» հաղորդմամբ վերլուծեց Դավիթ Արքայի տասնալար տավիղի մասին եղած եզակի տեղեկությունները, հաստատելով միջնադարում այդ գործիքի հայուստ տեսականու գոյությունը։

Միջնադարյան հնագիտական նյութերից ընտրված մի անոթի նկարազարդման էր վերաբերում Ֆ. Բաբայանի «Զնարակած թաս պարուհու պատկերով» զեկուցումը, որը վկայում է, որ X—XII դդ. հանդիսություններին անհրաժեշտ պայման է եղել վարձակ պարուհիների

ներկայությունը։ Ավանդական աստվածաշնչյան պատկերագրության թեմաներով էր հանդես եկել դիտնական Հ. Հիմանի «Վատիկանամերիկյան երաժշտական պատկերագրությունն Աստվածաշնչի ավանդական նկարագրություններում» խորագրով հաղորդումը, որտեղ խոսվում էր եվրոպացիների՝ Հնդկաստանում կատարած քարոզչության և դրա աստվածաշնչյան արտացոլումների մասին՝ ուշադրություն հրավիրելով ավանդական աստվածաշնչյան և ժամանակակից մտածողության ինքնատիպ տարրերի վրա։

Մանրանկարների մեջ արտահայտված պատկերների մասին էր Է. Պետրոսյանի «Թատերական ու երաժշտական կերպարները Ուղղափառ Արվեստի պատկերասրահում պահպանված հայ ձեռագրերի հավաքածուում» հաղորդումը։ XIII—XVII դդ. դրվագային ծավալուն նյութերում առանձնացվեցին դիմակներով պարոգների (արծվի, այծի, եղի, շան), կրկեսային (արջ, կապիկ) կերպարներ, երաժշտական գործիքներ՝ սրինգ, դուդուկ, տարբեր տեսակի փողեր, ծիսական զանգակներ ու բոժոժներ, որոնք բոլորն էլ կիրառման մեջ են եղել կենցաղում և հատկապես եկեղեցական թատրոնում։

Հնագիտական ու երաժշտագիտական համագործակցության արդյունք էր Հ. Պետրոսյանի և Հ. Պիկիչյանի «Երաժիշտը և խնջույքը ըստ (XVI—XVIII դդ.) տապանաքարային պատկերաքանդակների» զեկուցումը, որտեղ ճշտվելով քանդակները և համեմատական վերլուծություն կատարելով, եզրակացվեց, որ տապանաքարերի վրա դրվագի տեղ են հատկացված երաժիշտներին՝ իրենց նվագարաններով։ Տապանաքարերի վրա արված քանդակների հիմնական թեման հավերժ խնջույքն է, կապված մահը հաղթահարելու ժողովրդական պատկերացումների հետ։ Ս. Մանուկյանի «Տապանաքարերի վրա պատկերված նվագարանները» հաղորդումը ևս ամփոփում էր հարվածային, փողային ու լարային երաժշտական գործիքների պատկերման բազմազան ձևերի առկայությունը Հայաստանում։ Պարարվեստի մեջ տեղի ունեցած փոփոխություններին էր վերաբերում Ն. Կիլիչյանի «Ազգագրական պարի համույթի գործունեությունը (1924—1936 թթ.)» հաղորդումը, որտեղ հեղինակը, փաստական նյութ առաջարկելով, ընդգծեց համույթի ազդեցությունը երգի ու պարի, բազմաթիվ պետական ու ինքնագործ խմբերի գործունեության վրա։

Ս. Հարությունյանը «Զարդաշրջանակը պարի անիկոնիկ պատկեր» թեմայով զեկուցմամբ ուշադրություն հրավիրեց հայկական ծիսական պարերում գոյություն ունեցող աներևույթ պատկերագրության հարցին։

Ժ. Խաչատրյանը գիտաժողովը եզրափակեց «Պարը Վանո Խոջաբեկյանի նկարներում» զեկուցմամբ։ Վ. Խոջաբեկյանի գծանկար պատկերների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս լուսաբանելու XIX—XX դդ. առանձնահատուկ մի ժամանակաշրջանի քաղաքային կյանքին ու բանահյուսությանը, վերաբերող մի շարք հարցադրումներ, որոնք խոր հետք թողեցին հայ պարարվեստի վրա (հատկապես բեմական), խախտելով ժողովրդական պարերի մտածողության բոլոր կանոններն ու օրենքները։ Զեկուցման մեջ հատուկ ուշադրություն դարձվեց ծիսական «դևևդմանապարին» վերաբերող գծանկարներին, որոնցում արտահայտված ծնունդ-կյանք-մահ առասպելաբանական մտածողությունը հաստատվում է մատենագրական ու աղգագրական տեղեկություններով։

Գիտաժողովն իմաստավորվեց նաև մասնակիցների բազմաթիվ հարցերով, ելույթներով ու լրացումներով, զուգահեռ հնչեց նաև դրական դնահատական նստաշրջանի նպատակային, մեկ հարցադրմանը նվիրված թեմատիկ զեկուցում՝ մեկը մյուսին լրացնող ու շարունակող ձևին։ Այս հավաքը տարիներ շարունակ առաջարկվող՝ մեկ պրոբլեմի շուրջ գիտաժողով կազմակերպելու առաջին փորձն էր, որը մասնակիցների կարծիքով ընթացավ առատ նյութի մատուցմամբ, կարծիքների ու եզրակացությունների հետաքրքիր փոխըմբռնմամբ, նոր մտքերի ծնունդով և նոր գիտաժողով հրավիրելու առաջարկով։

Մասնակիցները հատուկ ընդգծեցին նյութի դասակարգման, թվագրման, փաստերի գիտական վերլուծություններին և այլ հարցերին վերաբերող հետևությունների հրատարակման անհրաժեշտությունը։ Դրանք հնագիտական, աղգագրական ու երաժշտագիտական երկարատև պրպտումների արդյունք լինելուց բացի, ապացուցեցին նաև հաղարամյակների խորքից եկող հայ մշակույթի բացառիկ արժեքները հանձնաձայն դարձնելու կարևորությունը։

Զեկուցումների հիմնադրույթները հրատարակվեցին հայերեն ու անգլերեն լեզուներով, նպատակ ունենալով հայ պատկերագրական նյութը օտարալեզու գիտնականներին մատչելի դարձնելը։

Ժ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ